



ՀԱՏՈՐ ԽԶ. ՊՐԱԿ Գ.

1888

ՅՈՒՆ. ԱՌԿՈՍՏ. ՍԵՊՏ.

ՀԱՆՐԱՊԵՏ ՀԱՅԿԱԿԱՆ

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶ ԳԻՐԳ

(ՏԵՍ ԷՂ 82)

Դ. ԹԱՐԳՄԱՆԶԱՅ ԵՐԹՆ Ի ԲԻԶԱՆԴԻՈՆ

Ո՛րք են քարգմանիւք սուրբ Գրոց։ — Հանգամանք առաջին քարգմանութեան յաստարականէ։ — Աշակերտքսրոցն Սահակայ և Մկարովայ։ — Անոնց դասակարգութիւնը։ — Էրիցագոյնքն՝ գործակիցք իրենց վարդապետաց՝ ի գործ քարգմանութեան։ — Առաքուռն աշակերտացն յէրեսիս և ի Բիւզանդիոն։ — Պատձաք առաքման ևոցա և ղեզերանաց։ — Դարձ ի Հայաստան ստոյգ օրինակօք աստուածաշունչ Գրոց։



ՐԱՆՑ ԿԸ վերաբերի արդեօք աստուածաշունչ Գրոց Թարգմանութիւնն ի հայ, իջոր Փարպեցի՝ ընդհանրապէս Պարթեւ հայրապետին կ'ընծայէ, և վարդապետաւէր աշակերտն Կորիւն՝ Մկարովայ, և Խորենացի՝ Երկբուին միանգամայն և իրենց աշակերտաց։ — Այս վերջինն է ամենէն հաւանականն և ընդունելին. զի — յառաջ աշխատակիցիք — զԹուարին վաստակ կ'երենայ, մեկ անձի մը եւեթ զայն գլխաւորելը. մանաւանդ սրբոյն Սահակայ նման բազմազգալ և ազգին հոգեւորական բեռը կրող հայրապետի մը. Փարպեցին՝ յատուրւոյն եղած Թարգմանութեան վրայ խօսելով՝ բովանդակ սուրբ Գրոց Թարգմանութիւնն Պարթեւ հայրապետին կուտայ հետեւեալ բացայայտ խօսքերով. «Անվէհեր ջանալով, կ'ըսէ, զցայգ և զտերեկ, Թարգմանեաց զխտակարանս ամենայն, զխօսեցեալսն ճշմարիտ մարգարեիւք, և հաստատեալ կնքեաց երջանիկ առաքելովքն զնո»

րոյ կտակարանաց զընասուր քարոզութիւնն նովին հոգւովս : Ուրիշ տեղ մ'ալ նոյն Փարպէցին . « Եւ տարիալ 'ի զուիս սուրբ հայրապետին Սահակայ զգործ մեծ հոգեւոր վաստակոցն , կարգեցուն վաղվազակի յայնմհետէ գարոցք հօտին ուսմանց » :

Այս յայտնի և որոշ խօսքերուն հետ պէտք է յիշեցնենք , ինչ որ արգէն ծանօթ է հմայից և տեղեկաց , որ մատենք պատուածաշունչք յերկուս ուրոյն գոտակարգութիւնս կը բաժնուին . յորոց ոմանք Նախակսնուն և այլք Երկրորդակսնոն գրքեր կը կոչուին : Բնական է որ Թարգմանական աշխատութեան ձեռք զարնուածք առնեն՝ նախամեծար սեպուէին առաջնակարգ գոտաւորութեան պատշաճեալքն , և Զանա-ցուէր նախ անոնց Թարգմանութիւնն ընծայել ազգին : Եւ եթէ , ինչպէս քիչ ետքը պիտի տեսնենք , երկրորդ է աշնուապոյն աշխատութեանն առեն՝ Թարգմանիչք Զանացին այս կարգը պահել , ևս առաւել սուրբն Սահակ , որ շունէր անոնց գիւրու-թիւնը՝ աշխատակցաց բազմութեան , որով և վաստակոյ բաժանման . և ինքզինքը այսպիսի մեծ հոգեւոր երկասիրութեան նուիրած առնեն ալ՝ դիտէր որ առժամա-նակեայ էր , և որուն յետոյ ընտրեալապոյն կերպարանք մը ապուռ փոփաքին ու դաղափարին առաջին հեղինակն ինքն էր : Ուստի և հաւանականաբար միայն նախ-կանոն գրոյց Թարգմանութեան զբաղեցաւ , և զայն 'ի գլուխ ասորաւ ըստ վիշտու-թեան Փարպէցւոյն : Այս աշխատութիւնն է՝ զոր պատմիչք մեր յատարագոյն եղեալ , յանկարծագիրտ Թարգմանութիւն կը կոչեն . և այս բառերուն շշուոտութեան մէջ է՝ իրենց ոչ այնչափ գոհութիւնն ընդ այն , և կարեւորութիւնն՝ մեծապոյն և աւելի ծանր , բայց կատարեալապոյն աշխատութեան մը ձեռք զարնելու :

Եւր ուրբն Սահակ այս մեծ վաստակոյ հետ էր , իրեն ու Վասմշապուհ Թագաւորին յանձնարարութեամբն ու ստիպելով , միւս այլ ծանր ու մտառանջ հոգովք կը պարպուէր Մեսրոպոյ . — հայկական տառից գիւտէն ետքը անոնց օրինուոր կազմա-կերպութեան և կարգաւորութեան գործով : Աւ երկուս և յարասեւ Զանգէ , անխնջ խռճարկութիւններէ , քաղցե քաղաք վտարանդի՝ բայց սիրելի պանդխտութիւն-նէրէ ետքը՝ երբ վերջապէս հասաւ իր փափաքելի նպատակին , ու իբրեւ նոր Մովսէս մը 'ի սինեական լեռնէ՝ լուսահրաշ փառք ու փայլմամբ ներկայացաւ օրոյն Սա-հակայ և արքունեաց , ալ այնուհետեւ կատարեալ ու անպատումէր ամենուն հոգե-կան սփոփանքն , զմայլումն և ուրախութիւնն :

Հայաստան աշխարհի ընտիր և ուսումնաստենը՝ և մտաւոր սննդեան սովատանջ և պապեալ երիտասարդութիւնը՝ արգէն փութացեր հասեր էր առ նոսա՝ աշակերտելու առ ոստ վեհադոյն վարժապետացն . յորոց առջի բերան 'ի ընտրելին վաժմունն « զառաւել ուշիմս . — ինչպէս կ'ըսեն պատմիչք , — զերկարոգիս և զփափկաձայնս » . և էին սահմանեալքն յառաքելութիւն « յազգս և 'ի լեզուս օտար գաւառաց , ուսանել իմաստութիւն և արուեստութեանութիւն . և առնել Թարգմանութիւն » : Ամանուն պատմիչ մը երեք խումբի կը վերածի զանոնք , ամէն մէկ գոտուն զշխուսարացն ու առաւել ծանօթագուտից անուանքն յիշատակելով . « Սուրբ պատրիարքն Սահակ , կ'ըսէ , երկնառաք պարգեւօքն ընտրել մանկունս առաքինաղարգս , և առաքել բերել յամենայն ազգաց զարուեստ մատենից . զՅովսէփ , զՂէւոնդ , զՅովհաննէս , զԱրթա-համ , զԱրժան և զՄուշէ , զԵղնիկ , զԿորեան և զայլս : Ապա զինի օսկաւուսց զՄովսէս , զԴաւիթ , զԵփրէմ , զՄատթէի զեղբայրն Մովսէսի : Զինի նոցա զԱրժան Արծրունի . և ընտրով և զՂազար պատմագիր . և սոքք Թարգմանեցին զամենայն մատենսն 'ի սոյոյգ օրինակաց սրբոյն Ղէւոնդի » :

Իսկ Աստուծոյ ժամանակն ալ կը ջանայ շփեւ հետեւեալ խօսքերով. « Եւ զատց հանգիստեալ յերկրորդ ամին Արատալքի արքայի Պարսից՝ զհինգերորդ ամի Աւամայ. հոյ. արքայի Հայոց, Յորում Մալթոյն երանելին որ էր՝ ի գեղ. զէ Հացեկաց, ի ձեռն Աւամայսոյն և մեծի հայրապետին Սահակայ՝ գանդեկեան նշառաբարձ գաղութիւն ըստ հայրամայն յորինէր՝ ընկերօք ոմամբք ատուելովք նմա ի Սա. հակայ: Եւս որոյ դարձեալ էւս ի վեցերորդումն նորին Աւամայսոյն, որ է առաջին Աւամայ Կրման արքայի, վերստին առաւածային շնորհատուեալ նշանաբարձք՝ շոյնս յեղանակեալ յորինէրս Որով և գաղութիւնք և գիրք աստուածաշունչք ուղղեալ թարգմանին, որպէս պատմէ Կրիստի և Ղազար: Եւ սկիզբն գաղութեանս Հայոց եղև սկիզբն մեծի գիտութեան, և անպայման խնդութեան բազում աշխարհաց »:

Ինչպէս է եմթագրիւք թէ այդ բազմութիւ աշակերտաց մէջ՝ երկցագոյնքն հաս. կաւ և առաւելեալքն ի գիտութեան՝ ունեցած են և զառաջնութիւն ի գործակցու. թեան իրենց վարդապետաց մեծ աշխատութեանն: Եւ զայս կը հաւատարմացնենք գարձեալ իրենց ժամանակին պատմագիրք:

Սակայն յառաջ բան զնոսա, որոց առաջին կամ երկցագոյն թարգմանիչք անունը առած ենք, և զոր արդեամբք ալ արգարացուցին, թարգմանութեան գործոյն ձեռն. տու և օժանդակ է՝ երկնան՝ օգնականք և գործակիցք սրբոցն Սահակայ և Մեսրով. պայ՝ Յովհան Եկեղեցային, Յովսէփ ի Պաղանական պանէ, Տէր ի Խորհեւոյ և Մուշէ Տարսնէցի, զորս սուրբն Պարթեւ օգնական կու տայ Մեսրովպայ, և զորս պատմիչն (Փարսեցի) կը կոչէ « արս բանբրունս և մտացիս ի քահանայից Հայոց »: Աստուա. ծառունչ գրոց թարգմանութեան սկիզբը՝ Յովսէփայ և Յովհաննու անուանք կը յիշա. տակուին առ Կորնան և Խորենացոյ. « Ի թարգմանութիւն գառնային, կ'ըսէ առա. ջինն, հանգիրձ արամբք երկու աշակերտացն իւրովք, որոց առաջնոյն Յովհան անունը կոչէին Եկեղեցաց, գաւառէն, երկրորդին Յովսէփ անունը՝ ի Պաղանական տանէն, և երկուս սկիզբն նախ Սաակացն Սողոմոնի »: Զնոյն կը կրկնէ և Խորենացի անմիջապէս յետ գիւտի կամ կազմակերպութեան հայկական նշանագրաց. « Իսկոյն ի թարգմա. նութիւն ձեռն արկեալ, խորհրդաբար օկնանելով յԱսակաց, բովանդակ զբանե. երկու յայտնին և զնոր կտակս հեղու ի հայ բան, նաև աշակերտք նորս Յովհան Եկեղեցային և Յովսէփ Պաղնայի, միանգամայն և զարուեստ գրութեան ուսուցա. նելով իւրոց մանկագոյն աշակերտացն »:

Այս գործոյն յարատէ Լանիւք զրազեցան՝ մանաւանդ սուրբն Սահակ:

Սակայն, ինչպէս յառաջագոյն ալ ակնարկեցինք, իրենց միտքը այն թարգմանու. թեամբ գոհ ըլլաւ և ազգք գոհացնելէր. լաւագունին փափաքը՝ և որչափ հնարա. խոր էր անյապաղ գործադրութիւնը, այդ մեծ և անմահական բարերարաց՝ սրտին և հոգւոյն նուիրական խոստմունքն էր. և ըսինք արդէն՝ թէ իրենց այս մտքին և կար. ծեաք վրայ ալ աւելի հաստատուեցան՝ երբ թարգմանութեան գործը ի գլուխ հանելէն ետքը՝ իմացան անոր թերութիւններն, որ աւելի գիմացնին գրուած բնագրին կամ ասորի թարգմանութեան անընտիր ըլլալուն հետեւեալքն էր:

Հայր և պարտք էր գարմանել այդ պակասը:

Այս նպատակաւ էին Մեսրովպայ գեղերանքն մինչև ի իրեղանգական արքունիս՝ յանձնարարական թղթովք ի թագաւորէն Հայոց և ի կաթողիկոսէն. ուր անոնց գովեալից խաբերէնք աւելի գոչաւորագոյն և ազգաւ էր՝ իր իմաստութեան և սրբութեան փայլն ու համբաւ. որով արքունական և պատրիարքական իշխանու.

Թիւիք հաւասար փութով զմիմամբ կը գլէին գնել նմա մեծարանս՝ շուք և պատիւ, Թագաւորական դեսպաններով զնաքաղաքացիք ի քաղաքս փոխադրելով, և որ մեծն էր և կարեւորագոյն՝ յօժարաւորութեամբ և յօժարակամ դիւրացնելով նմա զկատարուած ամենայն հայցուածոցն և խնդրուածաց, Հոգեւոր և քաղաքական պետք արեւելեան կայսերութեան մեծապէս գոհ էին որ Հայաստան իր այս քաղաքով՝ ասորի գերութեան կապանք ու շղթաները խորտակեց խզեց, և վստահք՝ երկրին աւանգական ու օրինակելի բարեպարիշաւ աստուածօրութեան վրայ, շէին աւարակուսեր որ Սասա, նեանք ալ անշուշտ պիտի լքանին ու յետս ընկրկին՝ երբ տեսնին Հայոց և Յունաց իրարու հետ սերտ միաւորութիւնը։ Սրբոյն Սահակայ աշակերտաց ապագայ յաջողութիւնն ի Բիւզանդիոնն ալլուր։ Մեսրոպայս նախընթացաբար այն կողմերն երևեալն ու ամենուեւրեմ սիրտը գրաւեւն էր, որ և անաւարակայ խռեցաւ կարգադրեց անոնց առաքման գործը, հապըցուց նպատակն, ու պէտք եղած վստահութիւնն տալով և ընդունելով, երբ դարձաւ միւսանգամ առ հայրապետ Սահակ, երկուքին միանգամայն փութացին ի գործ գնել իրենց մտաց խորհուրդը։

Ջովանյաշակերտացյալ զարկեցին նախ Սեբասիա, որտեղէն նշանաւոր էր՝ իբրեւ քրիստոնէայ-ասորի ուսմանց և գրաւորական շարժման կեդրոն մը, և որ վերջին անգամ մ'ալ պայծառագոյն կը փայլէր յայսմ ի հինգերորդ և մասամբ նաև ի վեցերորդ դարու։ Բայց մերքն ուրիշ կարեւորագոյն պատճառ մ'ալ կու տան՝ առաջին Թարգմանչաց հոն զբնուելուն։ « Դեպ լինէր, կ'ըսէ Վորիւն, եղբարս երկուս յաշակերտացն առաքել ի կողմանս Ասորոց ի քաղաքն Սեբասիացոց ... զի քառորական բարբառոյն՝ զնոցին հնոցն սրբոց զաւանդութիւնս՝ հայերէն գրեալս դարձուացեն »։ Եւ կը յաւելու թէ « Թարգմանչացն (որ էին Յովսէփ և Յքնիկ) հասեալ ուր առաքեցան, և կատարեալ զհրամանսն, և առ պատուական հարսն առաքեալ անցեալ զնացին ի կողմանս Յունաց »։ Զնոյն կ'աւանդէ և Խորենացի՝ « Սեկալ և առեալ Մեսրոպայս և մեծին Սահակայ զնոյն աշակերտ՝ զՅովսէփ և զԲիւս ընկեր նոյն ի կողմ գնդէն, որում անուան Յքնիկ կոչուր, առաքեն ի Միջագետս ի քաղաքն Սեբասիոյ, զի որ միանգամ գտայ անդ գիրք ասացեալ նոցին սրբոց առաջնոց, Թարգմանեալ ի մեր լեզու՝ բերցին փութով զի յետ այնր ի Բիւզանդիոն առաքեսցին ի նոյն գործ »։

Այդ էր ընդհանրապէս Թարգմանչաց խմբին փափաքը, փութալ ի կայսերական քաղաքն, որուն հռչակն՝ մեծ գրգիռ մ'էր իրենց երիտասարդ աշխուժին և եռանդեան, և թէ որպիսի յօժարութեամբ այդ ուղեգնացութիւնն կ'ընէին, հնութեամբ ու մատենագրական ոճով ոչ աննշան գրուածք մը՝ քերթողական բացատրութեամբ կը նկարագրէ։ « Մերքս ամենեւեան գումարելին հարգեւթէին կազմէին, պատրաստէին, յուզի անկանէին, երկայնոսէիք Խանապարհօրդէին, ի ծովս ընթանային, ի Թեւու Թեթևս Թուշէին, յերիվարս փայտակերտս ելանէին, զերտառնակս լայնալայնով ըմբռնէին, զխարաղանս օգտաւարածս յանէին, ի սասանտո գաշտս անհաստատոս արշուէին, զմահ քան զկեանս միշտ ընտրէին, աներեւոյթ նպատակի ուշ ունէին, զորոց զկնի բազումք յիւրաքանդիւր գարս և ի ժամանակս հանդիսանային, նախանձաւոր գործեաց բարեաց լինելով, և ի վստահս և ի շնան պատրաստելով զանձինս ժամայինն՝ աքնէին, աշխատէին, հարցասէր լինէին ուսանելով, կրթելով վարժելով վստակելով, պատրաստելով զանձինս ի յերկս օգտակարս, և ի գործս շահաւետս, ոմանք զտառից գծագրութիւնս շահաւորեալ, ոմանք զիմաստոս հաւաքեալ, զուսումնականն, զնաբանականն, զերկրաշափականն, զհամարողականն,

զերաժշտական, դաստեղաբանական, զբերգողական, զգործնական և զտեսական զմաստասիրութիւն և զմասունս նոցա որք են թուով երկոտասան: Ոմանց հաւասարէին գիտութեամբ, քան զոմանս վեհագոյնք երևէին, ոմանց զարմանալիք թուէին, ոմանց բազմալիք լինէին, ժրութեամբ, ուշխմութեամբ, իմաստութեամբ, խոհեմութեամբ, ուսումնասիրութեամբ, գիտութեամբ, բանագրատութեամբ: Ընդ ոմանս գասէին քննութեամբ, զոմանս պատասխանոյ արժանի ոչ համարէին, առ ընկերակիցս գովէիք, առ վարդապետս հաճելիք, հարցասերք, բանասերք, ընթերցասերք, ուսումնասերք, տքնասերք, ժրասերք, երկասերք և այսպէս ջանային, արխայային, խիզախէին, զօրանային, հանգիսանային, պատրաստելով, կուտելով, ժողովելով, յօգելով, բարդելով բեռինս մեծամեծս և դժուարակիրս, զգրեանց բազմութիւնս և զուսումն իմաստութեան, բազմոց փափաքելիս՝ բազմալիս, ցանկալիս, հեշտալիս, սիրելիս »:

Հասանելիցադոյն Քարգմանչաց ոմանք 'ի Բիւզանդիոն, զօրս Սահակ և Մեսրոպ պատմաբանք ելին առ գործն գրեալ: Մանաւանդ թէ անոնց ժամանելէն յառաջ՝ այլք յընկերակցաց նոցա՝ որ 'ի վարդապետացն զրկուեր էին յԵգիպտոս, աւելի իրենց երիտասարդական եռանդեան՝ քան պարտուց ձայնին անալով, և կասկածանոք և 'ի համբաւուց ուստեք անգնկանալով թէ զայլս յաշակերտակցաց որոշեր են երթալ 'ի կայսերական քաղաքն, առանց իրենց վարդապետաց նախընթաց հաւանութիւնն առնլոյ՝ փութալոցն հանել 'ի զլուխ զգործն հաւատացեալ նոցա, և լռելեայն անցան գնացին 'ի Բիւզանդիոն: Աստիք էին Յովսէփ և Եղիշիկ: Նախանձեցան Ղեւոնդ և Կորեան. և նոքա ալ իրենց կողմանէ գնացին 'ի Բիւզանդիոն, այսպէս փութալան և կանխաժաման երևնալով 'ի քաղաքին, յառաջ քան զՅովհան և զԱրժան՝ զսահմանեալսն 'ի սրբոյն Սահակայ, « որոց յուրաքար ուղեւորեալ և ծուրաքար գեգերեալ 'ի Կեսարիա » ուր ուրեմն հասին 'ի Կոստանդնուպոլիս:

Մերանածին թագաւորն Թէոդոս և պատրիարքն Մաքսիմիոս՝ արքայաշուք պատուով ընդունեցան այդ ամենայն սիրոյ և մեծարանաց արժանաւոր հիւրերը, իրենց ու բովանդակ հայրենեաց փափաքելի գանձը աւանդելով. — զսալոյդ և զհաստատուն օրինակ տառուածաշունչ գրոյց. և երանելի Քարգմանիչք՝ հասած իրենց նպասակին ու վախճանին, հոգեզուարճ ու անպապում ուրախութեամբ կը գառնային 'ի ցանկալի հայրենիսն, առ բազմբարխտ դաստիարակս, յորոց մարմնով միայն անջատուած զտառուած առժամանակ մի, այնոնց անձկաւն ու սիրով կը տոչորէին:

Քանի հոգեզոյլ ու զորովալիւր այն խանդաղատական աղապատանք, ու որպիսի երկնապարգև օրհնութիւն մեր հայրենեաց՝ այն փոխադարձ զրկախառնութեանց և երկուստեք թափուած բարեբար և արգասաւոր արտասոււոց մեջ, երբ դաստիարակք կը հանգիստին իրենց սիրելի աշակերտաց բազմակարօտկրկին տեսութեան, որոնք գիտցեր էին մեծապէս զգառակար ընել այն երկար գեղերանքն, զարդարելով իրենց միտքն ու հօգին ամենապատիկ ուսմամբք և նորանոր գիտութեամբք, և առաւելով 'ի ներվարժմունս յսնական լեզուի և գպրութեան:

Ե. ԵՐԿՐՈՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ Ս. ԳՐՈՑ

Ի ՅՈՒՆԱԿԱՆԵ՛

Թարգմանյաց դարձր 'ի Բիզանդիոնէ. — Խրննց հաստատունն օրինակց աստուա-
ծաշունչ տաւից. — Երկրորդ քարգմանութիւն և անոր հաստատումութիւնն.

Այնուհետեւ թէ վարժողաց և թէ վարժեցելոց միակնդատակն պիտի ըլլար այնչափ
ու այնպիսի ջանքով և փութով մթերեալ ուսմանց և հմտութեանց. հազարք ընել
զլուծիւն իրենց սիրելի ազգին: Եւ ինչպէս պատշտճը կը պահանջէր: Սահակ և
Մեսրոպ պիտի անոնց առջև սուրբ Գիրքը, հետեւին միաբան աշխատելով ընծայել
հայկական ընտիր ու անման թարգմանութիւնը, որ երեքտասան երկար դարերէ
'ի վեր իրաւամբք գլխաւորաբար պարծանք սեպուած է հայ մատենագրութեան:

Այսպէս ահաւասիկ 'ի գլուխ ելաւ երկրորդ և կատարեալ թարգմանութիւն Գրոց
սրբոց 'ի հայ լեզու, 'ի Կոստանդնուպոլսոյ բերուած ընտիր օրինակաց վրայ:

Հոս մտադիր կու տանք խօսքը՝ իրենց այս անգլուխական երկասիրութեան առաջին
հաւատարմիկ հրատարակող ապագրին « ըստ ձեւտ և անվթար օրինակի՝ գրեզգրոց
նախնեաց » Զօհրապեան Յովհ. վարդապետի:

« Ի խնամոց Բարձրելոյն առ հինգերորդ դարու բարգաւաճեալ ուսման իմաստից
'ի մերումս Հայաստան աշխարհի, սատարութեամբ Զառաքայլութեան Լուսաւորաց
ազգին՝ սրբոց Սահակայ և Մեսրոպայ, առաջին փոյթ եղև նոցա բազմաշխատ հայթ-
հայթանօք յօրինուած գրոյ հայկականն բարբառոյ, առ 'ի զթարգմանութիւնն առ-
տուածային մատենից անսպթաք կատարելոյ, որպէս ցուցանէ պատմութիւնն:
Յայն սակս 'ի ձեւնարկել նոցին երկրորդ անգամ կատարելագոյն թարգմանութեան
'ի հելլենականն բարբառոյ, 'ի բաց թողեալ զտալիկն զոր ակսեալն էին տանել յա-
սորի օրինակաց, իբրև դէպ եղև նմին իբի 'ի թագաւորեալ քաղաքն Կոստանդնուպո-
լիս առաքել զաշակերտս իւրեանց 'ի խնդիր ընտրելագոյն հելլենական քաղափարի,
'ի Մաքսիմիանոսէ պատրիարքէ Ժամանակին աւանդեցաւ 'ի ձեռս մերոց գեսպանաց,
ըստ գրելոյ Խորենացոյն, (Գ. 44) ստոյգ օրինակ գրոց: Զոր և պատմելով Կորիւն
տակ. Հաստատունն օրինակոց աստուածատուր գրոցն... գային իրեկոյլ յայխարհին
Հայոց: Ապաքն 'ի պատմութենէ թարգմանութեան սուրբ գրոց առ մեզ... գրեթէ
աներկբայ ունիմք իմաստասիրել լինելոյ այնմ 'ի հաւատարմագունեն 'ի հելլենական
քաղափարս, որ 'ի հինգերորդ դարու անդ նախամեծար յածէր թագաւորեալ
քաղաքին, յոր սակս Խորենացին և Կորիւն կոչն զնա ստոյգ և հաստատուն օրինակ:
Այլ եթէ այն այս էր ածանցեալն 'ի վեցի՛նէան օրինակէ անտի Որոգինեայ... իբր
ակներեւ հաւաստեն մեզ հեաք սրագինեան՝ աստեղանշանացն և բրգաձևաց՝ որ 'ի
գրչագիրս մեր երեխն այսօր. ըստ որում իմանմք զգլուծութեամբ Նշանակեալ 'ի
թարգմանչաց անոր մերոց 'ի հայկականս՝ որպէս զեարկ և գտին 'ի հելլենական գաղա-
փարի իւրեանց... Թէպէտ և 'ի վերայ այսր ամենայնի անտեղի էր մեզ կարծել, եթէ
այնչափ և այնօրիկ միայն՝ զորս ըստ տեղեաց անգեաց նշմարեմք 'ի գրչագիրս մեր,
իցնն որոգինեան նշանագրութիւնք շէքքաթիւ գրոյմաւրք: Քանզի ոչ միայն 'ի
հայկական մատենան մեր, այլ և 'ի նոյն 'ի հելլենականն՝ օրինակոց յօրինակս
փոխագրեալ 'ի միջոց բազում դարուց՝ 'ի պակասութենէն աշաւուրք խնամոց,

քրջաց, յուզմս այլալեցան այն նշանք... որով ընդ երկրաշուկեամբ անկանին նաև նշանագրութիւնքն այնոքիկ՝ որ 'ի հելլենական գրչագիրս երևին այսօր...:

« Երանելի Թարգմանիչք մեր քաղ հմտացեալք և 'ի հելլենականն, որպէս է տեսանել յարգեանց վաստակոց նոցա, զայսպիսի ընտրեալոյն գաղափար յանգիման ունելով, այնուհետև փոյթ յանձին կալան յեզուչ զայն 'ի հայկական բարբառ՝ գլխովին խնամով և զգուշութեամբ ըստ ճիշդ կանոնաց հաւատարմութեան, զոր օրինակ պահանջէր կարեւոր գործոյն հանգամանք, մինչև գոգցես՝ բառ առ բառ և ոճ առ ոճ պատշաճեցուցեալ, ըստ որում առ այն ոչ սակաւ օժանդակէր, նոս մեր ձաւորութիւն հայկականս սովորութեան տալից ընդ հելլենականի, որպէս 'ի բար. գութիւնն անուանց և 'ի շարամանութիւնն ձայնից, և այլն եւս: Այլ և 'ի վերայ այսորիկ՝ չքնաղ և վայելչաբան յօրինուածով ընտրի հայկաբանութեամբ՝ այնպէս անվթար յերկրեցին 'ի մերս հայրենի բարբառ, մինչև համարձակիմ ասել, զի եթէ 'ի նմա զբառ ինչ կամ զգրականց մի կամօրի ոք փոփոխել կամ՝ յաւելուլ և կամ՝ նուազեցուցանել, արգարե շմարթի առանց խտրարելոյ զքեանչելի ներգաշնակութիւն շարագրութեանն՝ յայն ձեռնամերձ լինել: Ասացելոցս Ճշմարտութեան 'ի վերայ հասեալ վիպեցին նաև այնոքիկ 'ի հնախնդիր հմտացելոց անտի այլալեզու Եւրոպացւոց, որոց միսնգամ գէպ եղև ըստ կարի տեղեկանալ հայկականս գպրութեան. և գոյզն մի առեալ զնշանկ մերում Թարգմանութեան, Հաւատարիմ սուանդ քաղուցեալ 'ի հայկական յարաւս համարեցան զնա, և սքանչեցեալ՝ Դիւխոյ համօրին բարգ. մանորեանց սուրբ գրոց իշխեցին կորգալ զնոյն, 'ի սակս պէտպէս մասանց կատաւելութեանցն և:

Զ. ՀՆԱԳՈՏԸ ՕՐԻՆԱԿԻ Ս. ԳՐՈՑ

Ի ՅՈՏԵ ՆԵՂՈՒ

Ա. Սինայական կոյուածն. — Բ. Աղեքսանդրեան օրինակ: — Գ. Վատիկանեան: — Դ. Եփեսոսեան գրչագիր: — Ե. Բասիլեան գրչագիր: — Ուրիշ գրչագիրք 'ի յոյն ռաբրաս:

Ուրիշ տեղ տալիք ունեցած եմք յիշատակելու թէ ինչո՞ւ աստուածաշունչ գրոց գրչագիրք առ մեզ՝ ոչ այնչափ բազմութիւք են համեմատութեամբ, բայց 'ի նորոց կատարանաց և մտաւանգ յաւետարանաց, և ոչ այնչափ հինք: Մեր քաղաքական պատմութեան բազմապատիկ և բազմոգիծ արկածք բռնագատեր են զնախնիս ոչ միայն իրենց հետ մինչև հեաւար երկիրներ գաղթելոցն զանոնք, այլ շատ անգամ ծածկել և ընդ հոգով ամփոփել իրենց սրտին և փաւատոցն ամենէն աւելի մերձաւոր և սիրեալոյն այդ քրքերն, որպէս զի չըլլայ թէ անոնց յարգն ու արժանաւորութիւնն չնանչեցողաց ձեռքն ինչալով՝ արհամարհուն կամ նախատուն, զոր իրաւամբ նախաորիք կը սեպելին կրօնից սրբութեան: Դեռ ինչուան մեր օրերը կը լսենք ու կը կարգաւոր, որ աւերակ ձեացած եկեղեցեաց հիմանց տակ ու որմոց միջ թաղուել ձեացած կը յայտնուին այդ սուրբ գիրք:

Որչափ ալ այս պակասը ուրիշ հին աղգաց քով ալ հանգիպինք, բայց անոնց մէջ կը գտնուին նաև մերիններէն հնագոյն Թուական կրօն աստուածաշունչ մատենաք:

Յոյն լեզուով և գրչութեամբ գտնուածն երուն մէջ՝ մանհարո մատգրութեան ար-
ժանաւորք են գլխաւորաբար Սինայականն (Sinaitique), Ալեքսանդրեանն (Codex
d'Aléxandrie), Վատիկանեանն (Codex du Vatican); Եփրեմեանն, Բասիլեանն,
և այլք:

Ա. Սինայականն (գրչութիւն Դ դարու) կը գտնուի 'ի կայսերական Մատենադա-
րանին որ 'ի Փեթրպոլսի Ռուսիոյ, և՛ կ'ամփոփէ յինքեան զմեծ մասն Հոյ կտակին,
զնորն ամբողջ. Բառնարայ առաքելոյ ընծայուած թուղթը, և զառաջին մասն Հովիւ
գրոյ Հէրմայ: Այս վաղեմի և պատուական գրչագիրն գտնուեցաւ յամի 1844,
Դիէնտորֆ անուանի գերմանացի հնախուզին ձեռքով 'ի վանն արքուհոյն Կատարի-
նեայ որ 'ի Սինա լեբն. և որուն յարգին ու աղնուութեան անտիղեակ կրօնաւորք՝ կը
գործածէին ուրիշ թղթոց ու մագաղաթներու հետ, ինչպէս՝ կ'ուանողէ ակնասան
գտնողն, իրենց վառարանին կրակ տալով: Դիէնտորֆ անոնց մեծ գծուարութեան
կրցաւ ստանալ՝ հոյ ճարտի պատրաստուած այդ թերթերը՝ և ապրեցնել որբազան
գիտութիւնն և ուսմանն ցանալի կորստենէ մը, որուն արդէն զոհ եղած էին ուրիշ
թերթերն: Յաջողեցաւ գաղափարել ուրիշ հատուածներ ալ, և զորս հրատարակեց
'ի 1855 Սրբազան անտիպ յիշատակարանք (Monumenta Sacra inedita) կոչուած
երկասիրութեան մէջ: Իսկ Աստուածաշունչ գիրքն ամփոփող քառասուն և՛ հինգ
թերթերն, — վասն զի այնչափ միայն կրցաւ ապրեցնել, — տպագրութեամբ հրա-
տարակուեցան 'ի 1846: Երկրորդ ճանապարհորդութեան առթիւ՝ զոր նոյն գի-
տական գերմանացին ըրաւ 'ի 1859, Ռուսաց կայսեր հովանաւորութեամբն յաջ-
ղեցաւ այս պատուական յիշատակարանին գեռ անկորուստ մնացած ուրիշ մասունք
ալ ձեռք բերել: Մինչոց ու թուոց գրքերէն այլ և այլ հատուածներ, որ 'ի 1848
Պորփուր Ուզպէնկոս արքեմանարիգին ձեռքով ու ջանքով փոխագրուած էին 'ի
Ռուսաստան: Արդէն իր խարդախած ձեռագիրներովը ուսումնական աշխարհի շատ
իսկ ծանօթ յոյն բաղձարիներն Սինայեան՝ ուղեց Դիէնտորֆի գիւտին փառքն
ազատացնել: Իրեն վերագրելով այդ աստուածաշունչ գրոյ հին ու ամբողջ գաղա-
փարի մը գիւտը՝ իբր երեսուն տարի յառաջքան զիմաստուն գերմանացին: Սակայն
իր այս խաբէութեանը մէջ ալ չյաջողեցաւ:

Այլևայլ ակնանհար անձինք, մեծարոյք և պապականիք երեսն արբազան և հնախոս
գիտութեամբ, զբաղեցան Դիէնտորֆի այս կարևոր գիւտով, և բազմաթիւ հետաքըն-
նական երկասիրութիւնք լայս տեսան, քննելով, բազդաաւելով ու պարտուպառչա՝
յարգանքն ընծայելով գերմանացի խուզարկուին ջանքով եղած գիւտին և անոր հրա-
տարակութեան: Ասոնց մէջ ամենէն աւելի նշանաւոր և հետաքննականք կը տպուին
Notitia editionis Codicis Sinaitici. - Bibliorum Codex Sinaiticus Petropolitanus,
1862. - Novum Testamentum Sinaiticum, 1863, 65 և 69. Մտագրութեան ար-
ժանաւոր երկասիրութիւն մ'ալ սոյն նկատմամբ է հեռեհեռն. F. H. Scrivener. A
full Collation of the Codex Sinaiticus, Cambridge, 1864.

Եթեմհարիւր յիսուն թերթերէն կամ 'ի հազար չորս հարիւր վաթսուներեք
իջից, զորս ուներ Սինայական գրչագիրն իր ամբողջութեան մէջ, երբհարիւր ութ-
սուն և ութ թերթք հասած են առ մեզ անկորուստ, անոնց մէջ տեսելով նաև Փրեզ-
րի Աւետարանտի գաած քառասուններեք թերթերն. երկու հարիւր քառասուն-
նուերկու թերթք 'ի հին կտակարանաց և հարիւր քառասուններեք թերթք 'ի
նորոյն. աճէն մէկ իջնի վրայ չորսական սիւնակք, բայց 'ի հին կտակարանի բանի մը
չբերէն որոնք ամբողջ աղղերով գրուած են՝ առանց բաժանման 'ի սիւնակս: Պա-

ղոսի Թուղթն առ Հերայեցիս զետեղուած է յետ առ երկրորդ Թեսաղոնիկեցիս Թղթոյն. իսկ բովանդակ Թուղթք տալքելոյ՝ յառաջագոս են քան Պրահա առաքելոց. 'ի լուսանայն կը տեսուին Ամեննեան կոչուած բաժանմունք և Եւսեբեան կանոնաց Թուղթանք, ձեռագրին ժամանակակից անձէ մը, կամ 'նոյն իսկ գրչին ձեռք: Բայ լրնդօրինակոյն 'ի Իրէնտորք տոսուերկու իրարմէ տարբեր ուղղադր. որոյց սրբադրուած թիւններ աչ նկատած է, յորց չորք՝ չորրորդ, վեցերորդ և եօթներորդ գարուց:

Բ. Աղեքսանդրեան օրինակ՝ Հինգերորդ գարու գրչագիր մը՝ զոր 'ի 1628 պատ. ընթերց յոյն Կիւրեղ Լուկար՝ Կարսոյ Անդղիոյ Թագաւորին ընծայած է. իսկ հիմա կը գտնուի 'ի Բրիտանական մուսէնին: Աղեքսանդրեան օրինակն հռչականուն եղած է նաև այնու՝ վանս զի ամենէն յառաջ 'ի նմա գտնուած է սրբոյն Կղևմայ հռովմայեցւոյ Թուղթն առ Կորնթացիս: Եօթնհարիւր եօթնասունուերեք Թերթերէ կը բաղկանայ գրչագիրն, յորց վեցհարիւր երեսուն Թերթ հին կապարանին, և միայն հարիւր երեսուն և չորս նորոյն: Կը պահասին 'ի նմա Մատթէի աւետարանէն իր գլխոյն 64 համարը. 'ի վեցերորդ գլխոյ 80 վաննու համարն 50դ, և յութերորդէն 52դ, Հաւանական կ'երևնայ Թէ չկայր 'ի նմա շնացաւ կնոջ պատմութիւնն Առ Կորնթացիս Թղթէն՝ 154 համար չորրորդ գլխոյն, և 64 երկոսասաներորդին. Կան 'ի նմա Ամենի Աղեքսանդրացւոյ բաժանմունք, բայց ոչ Եւթաղեանքն, և կանոնք Եւսեբեայն, Ամեննե աւելի հին գրչագիրն է՝ յորում կը տեսնուին զխաղարդութիւնք (κεφαλαια): Գրչութիւնն չէ յառաջ քան զվախճանել սրբոյն Աթանասի, բայց և ոչ յետ մահուան Եւթաղի. որոյ ձեռքով 458-490 Թուականներուն եղած բաժանմունք յառաւանածաշուշն գիրս՝ անմիջապէս ընդունելի ըլլալով սկսած գործագրուել, Զին կապարանն ըստ Աղեքսանդրեան օրինակի՝ տպագրութեամբ հրատարակեց նախ Կրայ (1707-1720), յետոյ Պապեր (1816-1828). իսկ զնորն Վոյդ (Woide) 'ի 1786 հմտական տեղեկութիւններով, և Գուբբը (1860) նորէն բաղգաւեց ընդ գրչագիրն և հրատարակեց:

Հին գրչագրաց մէջ իր ընթերցուածներով ամենէն աւելի համաձայն է Աղեքսանդրեանն ընդ ընդկալեալ օրինակի ասպռածաշուշն գրոց, թէպէտ և ունենալով իսկ ոչ սակաւ տարբերութիւններ:

Գ. Վատիկանեան օրինակ, գրեալ 'ի չորրորդ գարու, և որ կը գտնուի համանուն քահանայապետական Մատենագրանին մէջ՝ 'ի Հռովմ, և ասացուած է հեգեմասաւ. ներորդ գարու վերջին: Նորագոյն և ընտրելագոյն հրատարակութիւն գրչագրիս հղած է 'ի Հռովմ՝ 'ի ձեռն Վերջելլինէ, Գոցցա և Ֆայպանի հմուտ եկեղեցականաց. իսկ անոր վրայ տշխատող բաղմութեք են, սկսեալ յԵրամոսէ, 'ի Պիրիսէ, 'ի Պենթէլէի մինչև 'ի Իրէնէ և 'ի Իրէնտորք: Եօթնհարիւր յիսուննեւն Թերթք են, յորց հարիւր քառասունուերկու նոր կապարանն ամփոփողք, բայց 'ի Յայտնութեան գրքէն և Պաւղոսի առ Հերայեցիս Թղթոյն վերջին մասէն, սկսեալ իններորդ գլխոյն 14դ համարէն, և 'ի չորից վերջին Թղթոց կաթողիկէայց: Ամեն էջք երեք սխանակաց բաժնուած, բայց 'ի նորց կապարանաց որ միայրա տողք են: Զկան 'ի նմա ոչ Ամենեան բաժանմունք, ոչ Եւսեբեան կանոնք և ոչ Եւթաղի տալքերոնք. ոչ գրչութեք, ոչ վերնագիրք կամ ախլոսք. իսկ 'ի նոր կապարանն նոր բաժանմունք մը ունի. որ ուրիշ հին գրչագրաց մէջ չեն տեսնուիր, բայց 'ի Զակիւնթեան կոչուած

օրինակէն: — Վատիկանեան օրինակը շատ աւել կը տարբերի յընկալեալ և 'ի վա-
ւերացեալ օրինակէն. մեծ խնամքով գրուած՝ ըստ գեղագրական տեսութիւն, բայց
ընդհանրապէս աւելի սխալագիր. զեղեմամբ, կրկնութեամբ, որոց թիւը՝ ամենա-
մանր խուզարկութեամբ և խոչնդատութեամբ՝ մօտ 300 կը հանեն քննագաստք:

Գ. Եփրեմեան օրինակ (Codex Ephræmitanus), գրագիր հինգերորդ դարու,
յաղգային Մատենագարանին Փարիզու. և այս անունը կրելուն պատճառն է որ կրէ՛-
նագիր ձեռագիր մ'է, աստուածաշունչ գրոց հին և նոր կառկարանին վրայ երկրորդ
գրչութիւն ունենալով զմատենագրութիւնս սրբոյն Եփրեմի: Փոխադրեալ է յարեւ-
ելոյ 'ի ձեռն Անգրէի Յովհաննու Լաքարիս, և նախ գրուած 'ի Մատենագարան
Մէտիքի 'ի Փլորենտա Իտալոյ, ուստի բերուած 'ի Փարիզ նոյն ողջիւ սոհմէն
հաշականուն կատարինէ թագուհւոյն հետ (+ 1589): Բազմատուած ու համեմա-
տուած ընդ այլոց գրչագրաց յայլ և այլ հմտոյ, վերջին անգամ հրատարակեցաւ 'ի
Դիլէնտորֆէ. նոր կառկարանին մասն 'ի 1843, իսկ հինն երկու տարի ետքը: Առանց
բաժանման 'ի սկանկս, սողերն միայր գրուած են, ընդհանրապէս քառասունն մէկ,
բայց մերթ մը քառասունը վեցէն մինչև վաթսուն տող ամէն մէկ իջին վրայ: Ունի
զլուրիս, զտալոսս կամ զվերագիրս 'ի գլուխ իւրաքանչիւր աւետարանաց. նոյն-
պէս նաև զվանդան բաժանմանս, բայց ոչ և զթուագրութիւն Եւսեբեան կանո-
նաց, որ կրնան նաև առ հնութեան ժամանակաց անհետացած ըլլալ, որովհետեւ
սովորութիւն էր կտրմագեղով նշանակել զայնոսիկ, և որք հնչեաւ կրնան ջնջուիլ:
Ամենին բաժանմանք մը չգտնուելով 'ի Պարծս և յԱռաքելական Թուղթս, հաւա-
նական կը թուի որ գրութիւնն եղած ըլլայ յառաջ քան զԵւթաղ, կամ գեթ իրեն
ժամանակակից: Կրկնագիր ձեռագիր ըլլալուն, հազիւ նոր կառկարանին գրեթէ
երեք մասին մէկը կը բովանդակէ յինքեան. որով յերկու հարիւր յիսուն գլխոց
նորոյ կառկին՝ կը պակասին հարիւր չորս գլուխք:

Ե. Բասիլեան գրչագիր ութերորդ դարու. Հռովմայ մօտ 'ի Կրթութեամբերամ
Իտալիեան յունածէս կրօնաւորաց մատենագարանին մէջ գտնուած ըլլալուն
համար այսպէս կոչուած. իսկ հիմա կը պահուի 'ի Վատիկանեան գրատան:

Ասոնք են զլիսաւորք և հնագոյն գրչագիրք սուրբ Գրոց՝ 'ի յոյն լեզու, առանց
յիշելու և զայլս որ առջններուն ժամանակի հնութիւնն չունենայնուն, չունին
հարկաւ հաւասար կարեւորութիւն, ուստի և աւելորդ յիշատակել և զնոսա
աստէն: Մտադրութեան զլիսաւոր կէտ մը այն է, որ իրենց պատկառելի հնու-
թեամբն ալ, ամանք 'ի նոցանէ վերաբերելով իսկ հինգերորդ և չորրորդ դարե-
րու, իրարմէ կը զանազանուին, և յընկալեալ օրինակաց աստուածաշունչ գրոց ոչ
գոյնք տարբերութիւններ կը ներկայացնեն: Իսկ որ աւելի հետաքննականն է մեզի
համար՝ հայերէն օրինակք ալ մերթ ասոնցմէ մեկուն և մերթ միւսին համաձայն կը
ըուգընթանան, և թէպէտ չունին անոնց հնութիւնը 'ի գրութեան, բայց յաճախ
աւելի հաւատարմագոյն ընթերցուածներ կ'ամփոփեն, որով մեծապէս կ'առաւելու
մեր թարգմանութեան և անոր վրայ երկասիրողաց յարգը՝ նաև Իւրոպական իմաս-
տուն և լուսամբ բանասիրութեան քով:

Շարունակելի